

մէջը 33 մեծամեծ հաստ զանգակներ կան , և երկու կատարեալ ներդաշնակ եղանակներով կը զարնուին : Այկեղեցւոյս մէջ թագուած է Ուռապէնս երևելի պատկերահանը : 1555th Փիլիպոս Բ Ապանիոյ թագաւորը այս եկեղեցւոյս մէջ մեծ ժողովք մը ըրաւ Ասկեդեղման ասպետներու , որոնց ինը վեհապետաց զէնքերը դեռ ինչուան հիմա կը պահուին նոյն եկեղեցւոյն մէջ :

Վ. Տ. Ճ. Ա. Կ. Ս. Գ. Ր. Ո. Ւ. Թ. Ի. Խ.

Անգղիոյ արդի ուսուցմական վիճակը :
(Տես երևս 248)

Հոս յիշենք միայն | ոնտրայի գըւ խաֆոր քանի մը լրագիրները , որոնք աւելի վարկ ունին հասարակաց առջեւ : Յօյցն . Ամենօրեայ լրագիր , սկրսեալ 1788th . իւրաքանչիւր թերթին գինն է 5 բէնին , որ է ըսել կէս Փրանգ և տաճկական դրամով երկուք ու կէս զուռուշ . ազատական է , քաղաքական խնդիրներու մէջ լուսաւորեալ , պաշտպան անգղիական եկեղեցւոյ , և առանձինն հակառակող աղքատաց վրայ նոր դրուած օրէնքին : Յօյցմզ լրագրաց թագաւորը կը կոչուի շատերէն . և այս աստիճանի համբաւ որ ունեցած է՝ Պ. Ուողբէն ' է , որ լրագրիս հիմնադրին որդին է : Այլովաբար 40,000 օրինակ կը տպուի օրը . իրեն տարեկան մուտքը միայն վաճառականութե վերաբերեալ ծանուցումներէն 3,000,000 ֆր . է , և 500,000 ֆր . ալ տուրք կը վճարէ միայն այս մասիս համար . ամենէն աւելի լաւ կատարելագործուած շոգեշարժ մամուլ ներով կը տպուի . արդի հրատարակիչը կը կոչուի { Յովկ . { Յովս . | օսրն² :

Ո՞րնինէն Քրնէնէլ . Վ. Պ. աւոտեան յիշատակիր . սկզբնաւորած 1770th . 'ի սկզբան Ուժէ ըստած կուսակցութեան կողմն էր , բայց հիմա Պ. Ուոպերդ Փիլիք .

1 Անգլ . Walter.

2 Անգլ . Lawson.

օտարաց քաղաքականութեան սաստիկ դէմ զնող է :

Տէյլէ Նէու-Ղ . (Պ. ական նորալուրք . 1846th սկսած . ամենօրեայ . 3 բէննի է թերթի մը գինը . ասոր սկսելուն պատճառը ամէն լրագրաց գինը նուազեցը . նելու համար եղաւ . անոր համար սկրզբան երկուք ու կէս բէննիով սկսաւ , բայց վեց ամսէն իրեքի հանեցին . ըստ սկզբանց զուտ ուամկավարական :

Ո՞րնինէն Հէրըլլ . Վ. Պ. աւոտեան պատճառաւոր . 1781th սկսած է . ամենօրեայ ու 5 բէննի . մշակութեան կողմին վերջին աստիճանի պաշտպան , որով է Պ. Ուոպերդ Փիլիք սաստիկ ընդդիմախօս . որովհետեւ այս պաշտօնեայն եղաւ , որ ցորենի մաքսը թեթեցուց և Վ. նգղիամտնելլ դիւրացուց :

Ո՞րնինէն Բոսդ . Վ. Պ. աւոտեան թըղթաբեր կամ սուրհանդակ . ազնուական և եկեղեցական գլխաւորաց կողմն է ու պաշտպան . 1772th սկսած . 5 բէննի . օտար ազգաց քաղաքականութեան վրայ լաւ տեղեակ :

Ո՞րնինէն Էտվէրդայչը . Վ. Պ. աւոտեան ազգարար . ազատական և մասնաւորապէս մահուան պատիժը վերցընելու պաշտպան . 1793th սկզբնաւորած . 5 բէննի . 3000^b չափ բաժանորդ ունի իր ծախուցը :

Բալլիք . Լէճը . Հասարակաց հաշուեգիր . 1759th սկսած է և զուտ առևտրական է :

Վ. յս ամէն լրագիրներս առաւօտները կը հրատարակուին : Խսկ ետեխնները իրիկունը :

Լասբէն . Այլովանդակ . 3 բէննի . Տէյլէ Միուզի երեկոյեան թերթերն են , որ այս անունով կը հրատարակուին :

Ալօդ . Այրկրագունտ . 1811th սկրսած . 5 բէննի . կրօնական ազատութեան կողմնակից է . գրեթէ միայն իր կուսակցաց հատուածները կ'ընդունի :

Ո՞րենաբերտ . Դրօշ . 1827th սկզբնաւորած . գինը 5 բէննի . եկեղեցականաց լրագիր է . անփոփոխ ու հաստատուն իր սկզբանցը մէջ . ամենայն կերպով նման է Ո՞րնինէն Հէրըլլիք . որովհետեւ

Երկուքին ալ խմբագիրը նոյն մարդն է :

Այն . Երեզակն . 1792nd սկսած . ն բէնի . ազատական . օրը երկու ան- գամ կը հրատարակուի , առաւօտ և ի- րիկուն . բայց երեկոյեան թերթը ա- ւելի յարգ ունի՝ եղած լրերուն և նիւ- թերուն ձոխութեանը համար :

Ը եբենի էնոք երգենդիլ էնդդր . Կա- ւարկութեան և վաճառականութեան լրագիր . անտարբեր ու անզանազան քա- ղաքականութե մէջ . աշխարհքիս ամէն գլխաւոր նաւահանգիստները թղթա- կից ունի . անոր համար ամէն վաճա- ռականաց ալ խիստ հարկաւոր է :

Դյու գլխաւոր լրագիրներէն զատ՝ | ոնտոնի մէջ կան ուրիշ 150 լրագիրք ալ մեծաւ մասամբ քաղաքական . քաղա- քական ըսինք . վասն զի Խնդդիոյ մէջ քաղաքական 570 լրագիրներէն զատ , որոնք անվրէպ ամէն օր կը հրատարա- կուին , կան ուրիշ խելմը շաբաթական կամ ամսական օրագիրներ ալ , որոնց մեծ մասը ուսումնական , մատենագրա- կան և կրօնական նիւթերու և խնդրոց վերաբերեալ են . գրեթէ ամէն կրօնա- կան և ուսումնական կուսակցութիւն՝ իր մտաց ու կարծեացը յայտարար միջո- ցը ունի . միայն Հրեից համար | ոնտոնի մէջ այս տեսակ երկու օրագիր կայ . մէ- կը կը կոչուի Վոյո օֆի Իլլակլ . Զայն Խորայելի . 1845th սկսաւ . ասոր վախ- անն է Հրեից դարձը . երկրորդը կ'ը- սուի Վոյո օֆի Ճեկը . Զայն Յակոբայ . 1831nd սկսած . ասիկայ ալ Հրեութիւնը կը պաշտպանէ . դարձեալ կայ Եռունի- քը անունով օրագիր մ'ալ , որ կրօնի բացարձակ աղատութիւն կը քարոզէ . մասնաւոր շաբաթական օրագիրներ ալ կան տնտեսական գիտութեան համար : Դարձաւորաց ընկերութիւն մը կայ | Ի՞ութի՞ | Ենչըսդըրի անուամբ , որոնք լրագիր անունով թերթ մը կը հանեն՝ իրենց օգտին և շահուն պաշտպանու- թեանը համար . այս ընկերութիւնս 350,000 համախոչ և կուսակից ունի : (Հրագրաց հնագոյնն է | ոնտրայի լրա- գիր ըսուածը , որ 1665th սկսած է , և տերութեան պաշտօնական լրագիրն է :

Խնդդիա օրագրաց վրայ բնաւ տեսակ մը խստութիւն և զգուշութիւն չկայ . անոր համար ալ օր աւուր վրայ ամէն տեսակ օրագրաց թիւը կը շատնայ . բայց այն թուղթը , որուն վրայ օրագի- րը կը տպեն , տուրք ունի . այս թղթիս վրայ՝ բաց 'ի այն տուրքէն տպուելէն վերջը կնիք մ'ալ կը զարնուի , որն օր օրագրին մեծութեանը համեմատ կամ մէկ բէննի կ'ըլլայ , որ գաղղիական տասը սանդիմ է և տաճկական զրա- մով 20 փարա , և կամ կէս բէննի . իսկ թէ որ յաւելուած ունենայ , անոր համար ալ մասնաւոր տուրք կը վճարուի : Դարձեալ ծանուցմանց համար ալ ա- ռանձին տուրք կայ , որն օր 1833nd Յուլիսի 5th սկսաւ . ամէն ծանուցման համար կը վճարուի մէկ չլին ու վեց բէննի , որ տաճկական զրամով ուժ- ու կէս զուռուշ կ'ընէ :

Հոս ցուցակ մը կը գնենք 1849th օ- րագրաց ծանուցումներու և կնիքներու համար վճարած տուրքին :

Իսուն Խնդդիա և Կալէսի իշխանու- թիւնը 66,159,502 մէկ բէննիի կնիք վճարերէ . 10,309,233 ալ կէս բէննիի :

Դումնոյն դրամոց գումարը գաղղիա- կան զրամով կ'ըլլայ ֆր . 6,615,950 և 20 սանդիմ , և տաճկական զրամով 33,079,731 զուռուշ . իսկ երկրորդին գումարը կ'ըլլայ ֆր . 516,461 . 65 . և զուռուշով 2,578,308 . 10 .

Սկզբանական գումարը կնիք վճարերէ 205,000 կէս բէննիի

Իռլանտա 6,345,227 մէկ բէննիի 38,843 կէս բէննիի

| ոնտրայի մէջ միայննոյն տարին 160 լրագիր ընդ ամենայն տպեր են 886,108 ծանուցումն , և տէրութիւնը այս ծա- նուցումներուն համար առեր է 66,458 լիրէ սուրբէն , որ է ըսել 1,700,000 ֆրանդ , և կամ 7,642,670 զուռուշ :

| ոնտրայէն դուրս գաւառներու մէջ ծա- նուցումն տպելու իրաւունք ունեցեր են 232 լրագիրք , որոնք ընդ ամենայն տպեր են 834,729 ծանուցումն , և ասոնց հա- մար վճարեր են տէրութեան 62,604 և ստերլին : | կովտիոյ մէջ 94 օրագիրք

տպեր են 240,901 ծանուցումն , և ասոր համար տուրք վճարեր են 18,075 լ. ստ . Խռանտայի մէջ 117 լրագիրք 220,524 ծանուցումն տպեր են , և 11,026 լ. ստ . տուրք վճարեր են : Խռանտայի մէջ ծանուցմանց տուրքը նրազ է երրորդ մաս մը , այսինքն միայն շիլին մին է : 1847^{ին} պաշտօնական հաշումն նայելով՝ տէրութիւնը նոյն տարին բոլոր օրագիրներէն այս հետևեալ տուրքը ժողվեր է .

Օրագրաց կնկեն	343,278	լ. ստ .
Ծանուցումներէ	162,734	" "
Թղթի տուրք	617,245	" "
<hr/>		
	1,123,257	

Այս գումարս գաղղիական դրամով կ'ըլլայ 28,081,425 ֆր . և տաճկական դրամով 129,174,555 դուռուշ , ստերլինը 115 դուռուշ դնելով :

Ծայմզ լրագիրը միայն տարին 95,000 լ. ստ . տուրք կը վճարէ տէրութեան , որ է ըսել 10,925,000 դուռուշ .

Թղթի համար	16,000	լ. ստ .
Կնքոյ համար	60,000	
Ծանուցմանց համար	19,000	
<hr/>		
	95,000	

Հոս Անգղիական օրագրաց մեծութեանը վրայ գաղափար մը տալու համար՝ Ծայմզի մէկ թերթին հանգամանքը նկարագրենք :

1850^{ին} Այսիսի 7^{են} Ծայմզ իրեն յաւելուածովը 72 էջ էր . ընդ ամէնը 17,500 տող և մէկ միլիոն գիր կը բովանդակէր . և հայկական գրքով մը աւելի Ճիշդ գաղափար տալու համար՝ մեր նոր տպած գրաբար աշխարհագրութեան հարիւր տասը թուղթը կամ երկու հարիւր քսան թիւը ըսել է , բայց բոլոր երեսները լեցուն :

Անգղի դրուած նիւթերուն կողմանէ՝ հինգին երկու մասը երեկոյեան ժամը եօթնէն ետքը (ըստ Աւրուպացւոց) շարագրուած , շարուած , սրբագրուած ու տպուած պէտք էր որ ըլլար . յաւելուածը եօթը լիսուն վայրկենին մամուլ մը տած էր . թերթին առաջին ձեւ առաւտեան ժամը չորսին մամուլ դրուած էր , իսկ երկրորդ ձեւ երեկոյեան չորսին .

նոյն օրն որ քիչ օրինակ տպուած էր , իրիկունը ժամը վեց և 15 վայրկենին 7,000 օրինակ տպուած ու հրատարակուած էր արդէն . ժամը մօտ եօթն ու կեսին 21,000 եղաւ տպագրեալ և սրփուեալ օրինակաց թիւը , և եօթն ու 45 վայրկենին 34,000 . որով այսչափ հազար օրինակը առ առաւելն երկուք ու կէս կամ իրեք ժամու մէջ տպուած է :

Ամենէն շատ օրինակ 1848^{ին} Արտի 1^{են} տպեց , այսինքն 54,000 . և նոյն օրը ուրիշ օրերէն շատ աւելի նիւթ կը բովանդակէր՝ պատճառաւ Աւրուպայի ամէն կողմը խռովութիւն սկսելուն . նոյն օրը գործածած թղթին ծանրութիւնն էր 7,000 քիլոկրամ . իսկ սովորաբար ամէն օրուանը 3,000 քիլոկրամէ . 110 շարող և 25 տպող ունի , որոնք անընդհատ կ'աշխատին :

Ամենօրեայ և շաբաթական օրագիրներէն զատ , որ հազարի կը մօտենան , կան խել մը օրագիրներ ալ կամ ամսական և կամ եռամսական . ամսականները ընդհանրապէս լուսաբան կը կոչուին և եռամսականները զնուութիւն կամ խոյզ :

Անգղիացւոց ամէն օրագիրներն ալ միօրինակ կը զանազանին ուրիշ ազգաց օրագիրներէն՝ ազգասիրական սգուովը , որ երեւմն նաև չափազանց ալ կ'ըլլայ . վերջին աստիճանի կը սիրեն իրենց ազգին համար սեփականնել Հռովմէական բանաստեղծին այս խօսքը .

Իսկ գու իշխել աշխարհի կալքեղ պահեստ . որն որ Անգղիական տէրութեան սկըզբունք մը դարձած է , և իր ունեցած անբաւ գաղղթականութիւններովը այս խօսքս կերպով մը կը ստուգէ :

Օ այս վերջին հատուած կը սեպէնք Անգղիացւոց վիճակագրութեան վրայ , ըստ բաւականին խօսած ըլլալով նախընթաց յօդուածներով . յաջորդ թերթերով ալ կու տանք Դաղղիացւոց վիճակագրական տեղեկութիւնները , որ այժմեան պարագաներուն մէջ կրնան ախորժելի ըլլալ մեր ընթերցողաց :